



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19075

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 271-րդ ԿԳ դռնբաց նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/157-Ա

ՓԱՍՏԱՔԱՆ ԿԱՐԵՆ ՂԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրջյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարգսյանի և Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Կարեն Ղալումյանի (արտոնագիր թիվ 484) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՊԳ ղեկավար Մելանյա Առուստամյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ 2018 թվականի հունվարի 11-ին, ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212117 քրեական գործով մեղադրյալ Կարեն Յուրիի Էրոյանցի գործը ՀՊԳ ղեկավարի 19.01.2019թ ՀՊԳ-Վ/310/19-Ա որոշմամբ հանձնվել է Կարեն Ղալումյանին:

Դիմողը նշել է, որ 2019թ մարտի 21-ին դատական նիստի ընթացքում Կարեն Յուրիի Էրոյանցը հայտարարել է, որ հրաժարվում է հանրային պաշտպան Կարեն Ղալումյանից, քանի որ չի վստահում նրան և իր պաշտպանությունը վտանգված է, ցանկանում է ունենալ նոր հանրային պաշտպան: Դատարանը առաջարկել է Կարեն Ղալումյանի կարծիք հայտնել նշված հայտարարության վերաբերյալ: Կարեն Ղալումյանը հանդես է եկել հայտարարությամբ: Դատարանը որոշում է կայացրել նոր հանրային պաշտպան հրավիրելու մասին: Դատարանի որոշման պահանջները կատարելու և Փաստաբանի վարքագիծը ստուգելու համար ՀՊԳ-ն դատարանից պահանջել է դատական նիստի արձանագրության կրիչը: Ուսումնասիրելով դատական նիստի արձանագրությունը Դիմողը գտել է, որ Կարեն Ղալումյանի վարքագծում առերևույթ առկա են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 կետերի խախտման հատկանիշներ, քանի որ դատարանում նրա կատարած հայտարարությունը կասկածի տակ է դնում փաստաբանի հեղինակությունը, ազնվությունը և չի նպաստում

փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Դիմողը Դիմումին կից ներկայացրել է դատական նիստի արձանագրության կրիչը:

02.04.2019 թվականին Պալատ է դիմել Կարեն Էրոյանցը (**այսուհետ նաև՝ Դիմող**), ով հայտնել է, որ նույն թվականին դիմել էր ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ իր իրավունքները պաշտպանելու համար փաստաբան տրամադրելու խնդրանքով, և Պալատի կողմից որպես պաշտպան ներգրավվել էր Կարեն Ղալումյանը: Փետրվարի 8-ի դատական նիստից առաջ քննարկել են իր պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդություն անելու հարցը, և, համաձայնության չգալով, ստիպված է եղել ինքնուրույն ներկայացնել միջնորդությունը: Դատարանը, դիմելով պաշտպանին, փորձել է պարզել նրա դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ, վերջինս հայտնել է իր անհամաձայնությունը:

Դիմողը նշել է, որ դրանից հետո պաշտպանը չներկայացավ դատական նիստին անհասկանալի պատճառով, ինքն է իր պաշտպանությունն իրականացրել, իսկ դրան հաջորդող նիստերն որևէ շփում չի ունեցել նրա հետ: Նման պայմաններում դիմողը նույն թվականի մարտի 21-ի դատական նիստում հրաժարվել է Կարեն Ղալումյանի կողմից իրականացվող պաշտպանությունից: Դիմողը մեջբերել է նույն դատական նիստում պաշտպանի հայտնած դիրքորոշումները. *«Ինձ համար ավելի քան տարօրինակ էր այս գործով իմ մասնակցությունը, որովհետև անձը ում պաշտպանությունը ես ստանձնել եմ ՀՊԳ ղեկավարի որոշմամբ նրան մեղսագրվում է երկու արարք որոնք երկուսն էլ ընդգրկված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, բացի դրանից հարգելի դատարան, նախաքննության ընթացքում տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և առերես պնդել է իր և դատավարության այլ մասնակիցների կողմից կատարված հանցավոր արարքները, հաստատել է, ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություն է տվել, բայց այսօր դատավարության ընթացքում վիճարկում է մեղադրանքը», «Իր իրավունքն է, բայց ապացույցը գործի մեջ դրած, իրա ձեռով գրած, ճանաչած, էս ա արել էն ա արել...», «Հայտարարության վերաբերյալ տեղեկություն տվեցի, որ կոռուպցիոններ է դատվողը (...):»:*

Դիմողը նշել է, որ փաստաբանը չի պահպանել էթիկայի կանոնները, բացի այդ, դատական նիստում հայտնել է այնպիսի տվյալներ, որոնք, արդարացի կլինեն, որ դատավարության մյուս մասնակիցների համար հրապարակային չլինեին:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 29.04.2019թ. թիվ 157-Ա/ԿԳ-19075 որոշմամբ փաստաբան Կարեն Ղալումյանի (արտոնագիր թիվ 484) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.2. 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

03.05.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմող Կարեն Էրոյանցը ներկայացել է Խորհրդի նիստին և կարգապահական գործի քննության ընթացքում ըստ էության արտահայտել է դիմումով ներկայացված դիրքորոշումը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում փաստաբան Կարեն Ղալումյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 22.08.2019 թվականին Պալատում մուտքագրված գրությամբ ըստ էության առարկել է նախապատրաստողի եզրակացության դեմ՝ նշելով, որ կարգապահական գործը Պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստելու փուլում հիմնավորված չէ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը և խնդրել է կարգապահական գործի վարույթը կարճել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

04.07.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որում նշել է, որ դատական նիստի ծայնագրության հետազոտությունից ակնհայտ է դառնում, որ փաստաբան Կարեն Ղալումյանն իրականում հնչեցնում է արտահայտություններ, որոնք ակնհայտորեն վտանգի տակ են դնում իր վստահորդի պաշտպանության իրավունքը, վնաս հասցնում վերջինիս իրավունքներին ու օրինական շահերին: Փաստաբանն ըստ էության հրապարակում է իր վստահորդի հետ տեղի ունեցած մասնավոր խոսակցություն, որը պարունակում է փաստաբանական գաղտնիք, ինչը ևս անթույլատրելի է: Հատկանշական է, որ պաշտպանն իր գործողությունները չի դադարեցնում անգամ դատարանի և մյուս պաշտպանների միջամտության արդյունքում, որից ելնելով, դատարանը հարկադրաբար ընդհատում է դատական նիստը:

Վերոգրյալի հիման վրա նախապատրաստողը գտել է, որ փաստաբանի արարքում առկա են Կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի խախտման հատկանիշներ:

04.07.2019թ. գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 10.09.2019թ-ին, ժամը՝ 18:30-ին, 12.11.2019թ-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Կարգի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը որոշ ապացույցներ հետազոտել է դռնփակ նիստով:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապարաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) 21.03.2019 թվականի դրությամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/0296/01/18 քրեական գործով մեղադրյալ Կարեն Յուրիի Էրոյանցը հանդիսացել է փաստաբան Կարեն Ղալումյանի պաշտպանյալը:

Այս փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ, Դիմողների բացատրություններով:

2) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/0296/01/18 քրեական գործով 21.03.2019 թվականին հրավիրված դատական նիստում, երբ Կարեն Յուրիի Էրոյանցը հայտարարել է, որ հրաժարվում է հանրային պաշտպան Կարեն Ղալումյանից, վերջինս հանդես է եկել հայտարարությամբ նշելով հետևյալը՝

Կարեն Ղալումյան. «Ինձ համար ավելի քան տարօրինակ էր այս գործով իմ մասնակցությունը, որովհետև անձը ում պաշտպանությունը ես ստանձնել եմ ՀՊԳ ղեկավարի որոշմամբ նրան մեղսագրվում է երկու արարք որոնք երկուսն էլ ընդգրկված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, բացի դրանից հարգելի դատարան, նախաքննության ընթացքում տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և առերես պնդել է իր և դատավարության այլ մասնակիցների կողմից կատարված հանցավոր արարքները, հաստատել է, ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություն է տվել, բայց այսօր դատավարության ընթացքում վիճարկում է մեղադրանքը»:

Դատավոր. «Իր իրավունքն է պարոն Ղալումյան»:

Կարեն Ղալումյան «Իր իրավունքն է, բայց ապացույցը գործի մեջ դրած, իրա ձեռով գրած, ճանաչած, էս ա արել էն ա արել...»:

Այնուհետև ամբաստանյալին դիմում է ասելով՝ «Դու քեզ աշխատի ճիշտ պահես»:

Կարեն Ղալումյան «Հայտարարության վերաբերյալ տեղեկություն տվեցի, որ կոռուպցիոններ է դատվողը (...)»:

Այս փաստը հաստատվում է դատական նիստի ձայնագրությամբ, Դիմողների բացատրություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Կարեն Ղալումյանը փաստաբան է հանդիսանում 19.03.1996թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցով կայացվել են հետևյալ որոշումները՝

27.04.2016թ. թիվ ԿԳ/69-Ա որոշմամբ Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.3 և 3.5.5 կետերով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է,

06.10.2016թ. թիվ ԿԳ/109-Ա որոշմամբ բանդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով,

07.07.2018թ. թիվ ԿԳ/112-Ա որոշմամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է՝ արտոնություն կիրառելու հիմքով,

17.12.2018թ. թիվ ԿԳ/233-Ա որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ենթարկվել է պատասխանատվության և նշանակվել է տույժ՝ նկատողության տեսքով, որպիսի տույժը մարվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարեն Ղալումյանին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի վերոնշյալ ենթակետերով սահմանված խախտման առկայության կամ բացակայության փաստն արձանագրելու համար խորհուրդը անհրաժեշտ է համարում ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները՝

- արդյո՞ք Պալատի անդամները իր գործողություններով նպաստել է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը և չի կատարել իր հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ դնող գործողություններ.

- արդյո՞ք Պալատի անդամները գործել է ելնելով իր վստահորդի նպաստավոր շահերից և իր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն է ցույց տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում.

- արդյո՞ք փաստաբանը գործել է վստահորդի շահերին հակառակ և ներկայացրել է դիրքորոշում՝ առանց վերջինիս հետ համաձայնեցնելու:

Այսպես.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնագրապարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը:

Կանոնագրքի 3.5.3 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու, բացառությամբ այն դեպքերի, երբ

փաստաբանը համոզված է պաշտպանյալի (վստահորդի) ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը, ինչպես նաև իրավունք չունի դրդել կամ համոզել նրան իրեն մեղավոր ճանաչել:

Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը և չկատարել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ դնող գործողություններ: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ բնույթի պարտավորության դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ՝ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Նշվածի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե՛ այլ ոլորտներում:

Միևնույն ժամանակ, Կանոնագրքի 2.6.1 ենթակետը փաստաբանի վրա պարտականություն է դնում մշտապես գործել՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից: Վստահորդի նպաստավոր շահերից գործելը ենթադրում է վստահորդի ողջամիտ ջանասիրությունը կիրառել օրենքով չարգելված բոլոր վերաբերելի միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Փաստաբանի այս պարտականությունը ձևակերպված է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման և պաշտպանության համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք,

թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

Բացի այդ, Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետը և Կանոնագրքի 3.5.5 կետը պարտավորեցնում է փաստաբանին չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու:

ՄԱԿ-ի 1990թ. *«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»*-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, *inter alia*, **«իրենց վստահորդներին բոլոր պարզաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ)), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է** (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, (*Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս *Մորիս*, § 137):

Տվյալ պարագայում, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը չի գործել՝ ելնելով վստահորդի նպաստավոր շահերից, կատարել է վստահորդի շահերին հակասող գործողություններ, դատարանում հայտնել է դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու:

Մասնավորապես, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/0296/01/18 քրեական գործով 21.03.2019 թվականին հրավիրված դատական նիստում, երբ Կարեն Յուրիի Էրոյանցը հայտարարել է, որ հրաժարվում է հանրային պաշտպան Կարեն Ղալումյանից, վերջինս հանդես է եկել հայտարարությամբ նշելով հետևյալը՝

Կարեն Ղալումյան. *«Ինձ համար ավելի քան փարփոհնակ էր այս գործով իմ մասնակցությունը, որովհետև անձը ում պաշտպանությունը ես ստանձնել եմ ՀՊԳ ղեկավարի որոշմամբ նրան մեղսագրվում է երկու արարք որոնք երկուսն էլ ընդգրկված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկում, բացի դրանից հարգելի դատարան, նախաքննության ընթացքում տվել է ինքնախոստովանական ցուցմունքներ և առերես պնդել է իր և դատավարության այլ մասնակիցների կողմից կատարված հանցավոր արարքները, հաստատել է, ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություն է տվել, բայց այսօր դատավարության ընթացքում վիճարկում է մեղադրանքը»:*

Դատավոր. *«Իր իրավունքն է պարոն Ղալումյան»:*

Կարեն Ղալումյան *«Իր իրավունքն է, բայց ապացույցը գործի մեջ դրած, իրա ձեռով գրած, ճանաչած, էս ա արել էն ա արել...»:*

Այնուհետև ամբաստանյալին դիմում է ասելով՝ *«Դու քեզ աշխատի ճիշտ պահես»:*

Կարեն Ղալումյան *«Հայտարարության վերաբերյալ տեղեկություն տվեցի, որ կոռուպցիոններ է դատվողը (...)»:*

Վերոգրյալից հետևում է, որ Պատասխանողը, հանդես գալով թիվ ԵԴ/0296/01/18 քրեական գործով իրավունքների պաշտպանվածության տեսանկյունից առավել խոցելի կարգավիճակում գտնվող սուբյեկտի՝ մեղադրյալ Կարեն Էրոյանցի պաշտպան, ի հեճուկս վերջինիս կողմից դատարանում արտահայտված՝ իր մեղքը չընդունելու վերաբերյալ դիրքորոշման (ինչը վերջինիս դատավարական իրավունքն է), դատական նիստում կատարում է վերջինիս՝ մեղավոր լինելու վերաբերյալ հայտարարություններ, ինչը պարզապես անթույլատրելի է:

Պալատի խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում Պատասխանողը գործել է վստահորդի շահերին հակառակ և ներկայացրել է դիրքորոշում՝ առանց վերջինիս հետ համաձայնեցնելու, Պատասխանողը չի գործել ելնելով իր վստահորդի նպաստավոր շահերից և իր վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել իր մասնագիտական կարողությունների սահմաններում:

Ավելին, փաստաբանի նման գործողություններն ըստ էության կասկածի տակ են դնում նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը և որևէ կերպ չեն նպաստում փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Նման պայմաններում, խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի գործողությունները պարունակում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, համաչափության հիմնարար սկզբունքը, ինչպես նաև փաստաբան Կարեն Ղալումյանի անձը բնութագրող հանգամանքները:

Սույն պարագայում փաստաբանին կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համաչափությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս փաստաբանի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և փաստաբանի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ փաստաբան Կարեն Ղալումյանն իրեն մեղսագրվող արարքը կատարել է դիտավորությամբ և կատարվածի համար չի զղջացել, վերջինիս վարքագծի հետևանքով տուժել է փաստաբանական համայնքի և փաստաբանի մասնագիտության հեղինակությունն ու բարի համբավը, ինչպես նաև Խորհրդի կողմից վերջինիս պատշաճ վարքագծի ապահովման նպատակով նրա նկատմամբ կիրառված կարգապահական տույժը չի նպաստել նրա վարքագծի ուղղմանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝....3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը:*

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցելու» կարգապահական տույժերի տեսակները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 7.2.5 կետի 1-ին մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Ղալումյանին (արտոնագիր թիվ 484) ճանաչել մեղավոր Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2, 2.2.3, 2.6.1 և 3.5.3 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարեն Ղալումյանի (արտոնագիր թիվ 484) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեռնթոլոգիա» թեմայով, 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Գայանե Դեմիրջյան

12 նոյեմբերի 2019թ.
թիվ ԿԳ/157-Ա
ք. Երևան